

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Գլոբուսի վերաբերյալ տրված պնդումներից ո՞րն է սխալ:

- 1) Գլոբուսների վրա բոլոր միջօրեականների երկարությունները հավասար են:
- 2) Բոլոր անկյունները հավասար են բնության մեջ եղած իրական անկյուններին:
- 3) Ցանկացած երկու գուգահեռականների միջև եղած հեռավորությունները հավասար են:
- 4) Քարտեզների հետ համեմատած, գլոբուսների վրա աղավաղումներն ավելի շատ են:

2

Բնական ռեսուրսների ընդհանուր պաշարների քանակի և օգտագործման չափերի հարաբերությունը կոչվում է.

- 1) ռեսուրսապահովվածություն
- 2) բնառեսուրսային ներուժ
- 3) ռեսուրսի տնտեսական գնահատում
- 4) բնական ռեսուրսների կադաստր

3

Ստորև թվարկված պլատֆորմներից ո՞րոնք են առաջացել Գոնդվանայի մասնատումից:

- 1) Հյուսիսամերիկյան և Հարավամերիկյան
- 2) Չինական և Հնդկական
- 3) Ավստրալական և Անտարկտիկական
- 4) Միջինարևելյան և Արաբական

4

Տրված գետերից ո՞րն է թափվում Ատլանտյան օվկիանոս:

- 1) Զամբեզին
- 2) Շարին
- 3) Լիմպոպոն
- 4) Նեդոսը

5

Ինչպե՞ս են կոչվում տափաստանները Հարավային Ամերիկայում:

- 1) կամպոս
- 2) լյանոս
- 3) պամպա
- 4) սելվաս

6

Ըստ տևողության միգրացաները լինում են.

- 1) մշտական
- 2) հարկադիր
- 3) կամավոր
- 4) կազմակերպված

7

Այս ռասայի ներկայացուցիչները առանձնանում են մուգ մաշկի գույնով, հաստ շուրթերով, լայնանիստ քթով, զարգացած մազաձածկույթով:
Ո՞ր ռասայի մասին է խոսքը:

- 1) ավստրալոիդ
- 2) նեգրոիդ
- 3) մոնղոլոիդ
- 4) եվրոպեոիդ

8

Ո՞ր գետի վրա է գտնվում «Երեք կիրճ» ջրէկ-ը:

- 1) Յանցզի
- 2) Պարանա
- 3) Ենիսեյ
- 4) Լենա

9

Ո՞ր տարածաշրջանում է գտնվում Ֆրանսիան:

- 1) Արևմտյան Եվրոպա
- 2) Հարավային Եվրոպա
- 3) Արևելյան Եվրոպա
- 4) Հյուսիսային Եվրոպա

10

Ո՞ր երկրում է առանձնահատուկ բարձր զարգացում ստացել ծաղկաբուծությունը:

- 1) Ֆինլանդիա
- 2) Նիդեռլանդներ
- 3) Ֆրանսիա
- 4) Նորվեգիա

11

Տրվածներից ո՞րը չի համարվում բնական աշխարհագրության ճյուղ:

- 1) երկրաձևաբանությունը
- 2) հողերի աշխարհագրությունը
- 3) կենսաաշխարհագրությունը
- 4) տնտեսական աշխարհագրությունը

12

Տրված գործոններից ո՞րը չի համարվում կլիմայաստեղծ Հայկական լեռնաշխարհի համար:

- 1) մակերևույթի լեռնային բնույթը
- 2) Միջերկրական և Կասպից ծովերի մոտիկությունը
- 3) մթնոլորտի շրջանառության առանձնահատկությունները
- 4) Գոբի և Տակլա Մական անապատների մոտիկությունը

13

Զույգերով տրվածներից որո՞նք են պղնձահրաքարային հանքավայրեր:

- 1) Ալավերդին և Կապանը
- 2) Սոթքը և Մեղրաձորը
- 3) Փամբակի և Շվանիձորի
- 4) Սվարանցի և Հրազդանի

14

ՀՀ մարզ – մարզկենտրոն գույգերից ընտրել *սխալը*:

- 1) Լոռի – Վանաձոր
- 2) Շիրակ – Գյումրի
- 3) Արարատ – Արարատ
- 4) Սյունիք Կապան

15

ՀՀ ո՞ր մարզում է գտնվում Պարզ լիճը:

- 1) Լոռի
- 2) Տավուշ
- 3) Վայոց ձոր
- 4) Գեղարքունիք

16

«Պետություն-մայրաքաղաք» համապատասխանեցումներից ո՞ր շարքն է ճիշտ.

- | | |
|---------------|--------------------|
| ա) Ինդոնեզիա | 1) Մանիլա |
| բ) Ֆիլիպիններ | 2) Կուալա Լումպուր |
| գ) Մալայզիա | 3) Բանկոկ |
| դ) Թայլանդ | 4) Ջակարտա |

- 1) դ-1, ա-2, բ-3, գ-4
- 2) բ-2, ա-3, գ-4, դ-1
- 3) գ-1, բ-2, ա-3, դ-4
- 4) ա-4, բ-1, գ-2, դ-3

17

Ո՞ր մայրցամաքում է գտնվում աշխարհի ամենաբարձր ջրվեժը:

- 1) Աֆրիկա
- 2) Հյուսիսային Ամերիկա
- 3) Ավստրալիա
- 4) Հարավային Ամերիկա

18

Ծնելիության և մահացության հետևանքով բնակչության սերունդների նորացման և հերթափոխման գործընթացը անվանում են.

- 1) բնակչության վերարտադրություն
- 2) բնակչության միգրացիա
- 3) բնակչության տարաբնակեցում
- 4) բնակչության միջին խտություն

19

Տրված պնդումներից ո՞րը բնորոշ չէ համամոլորակային հիմնախնդիրներին:

- 1) Համամոլորակային հիմնախնդիրները վերաբերում են թե՛ ամբողջ մարդկությանը, թե՛ յուրաքանչյուր մարդու:
- 2) Այս հիմնախնդիրներին բնորոշ է սերտ փոխկապակցվածությունը և փոխապայմանավորվածությունը:
- 3) Այս հիմնախնդիրները ոչ մի հետևանք չեն թողնում տնտեսության զարգացման վրա:
- 4) Կարող են լուծվել ամբողջ մարդկության ջանքերով և բոլոր երկրների մասնակցությամբ:

20

Չույզերով տրված մշակաբույսերից ո՞րոնք են թելատու տեխնիկական:

- 1) արևածաղիկը և սոյան
- 2) բրինձը և եգիպտացորենը
- 3) ջութը և սիսալը
- 4) սուրճ և կակաոն

21

Ո՞րը չի համարվում Համաշխարհային տնտեսության զարգացման նախադրյալ:

- 1) համաշխարհային շուկան
- 2) խոշոր մեքենայական արտադրությունը
- 3) բնակչության ցածր բնական աճը
- 4) երկաթուղային և ծովային տրանսպորտի զարգացումը

22

Տրված հողատիպերից ո՞րը չի համարվում գյուղատնտեսական հողահանդակ:

- 1) վարելահողերը
- 2) արոտավայրերը
- 3) կմախքային հողերը
- 4) բազմամյա տնկարկները

23

Հորիզոնի n° կողմի հետ է համընկնում 90° ազիմուտը:

- 1) հյուսիս
- 2) հարավ
- 3) արևելք
- 4) արևմուտք

24

Բնութագրումով որոշել պետությունը:

Այս պետությունը «Մեծ յոթնյակի» անդամներից է, որը ելք ունի դեպի Միջերկրական ծով: Տարածքը կազմված է մայրցամաքային, թերակղզային և կղզային մասերից: Տնտեսության մեջ հատկապես մեծ է «Ֆիատ», «Ֆերրարի», «Օլիվետի» խոշոր վերագգային ընկերությունների դերը:

- 1) Իսպանիա
- 2) Հունաստան
- 3) Իտալիա
- 4) Պորտուգալիա

25

Տրված պետություններից n° ըն հարուստ չէ վառելիքային օգտակար հանածոներով:

- 1) Իրան
- 2) Թուրքիա
- 3) Ադրբեջան
- 4) Սաուդյան Արաբիա

26

Տրված պնդումներից n° ըն է ճիշտ:

- 1) Ադմուկը, փոշոտվածությունը և կենցաղային թափոնները համարվում են ֆիզիկական աղտոտում:
- 2) Հեղուկ ածխաջրերի, ծծմբի, ազոտի օքսիդների, ծանր մետաղների թափանցումը շրջակա միջավայր չեն առաջացնում քիմիական աղտոտում:
- 3) Մնկերը, բակտերիաները և կապտականաչ ջրիմուռները աղտոտում չեն առաջացնում:
- 4) Բնական միջավայրի ներկայիս վատթարացման հիմնական և առավել վտանգավոր պատճառը բնածին աղտոտումն է:

27

Քարտեզ 1-ում ո՞ր մարզն է նշված Ե տառով:

- 1) Գեղարքունիքի
- 2) Կոտայքի
- 3) Արագածոտնի
- 4) Տավուշի



Քարտեզ 1

28

Ո՞ր լեռներն են նշված Դ տառով քարտեզ 1-ում:

- 1) Ուրծի
- 2) Վայքի
- 3) Երանոսի
- 4) Զանգեզուրի

29

Քարտեզ 2-ում *Բ* տառով նշված լեռներն են նշված:

- 1) Կապի
- 2) Ատլասի
- 3) Ալպյան
- 4) Դրակոնյան

30

Քարտեզ 2-ում *Գ* տառով նշված ջրվեժն է նշված:

- 1) Վիկտորիա
- 2) Նիագարա
- 3) Իգուասու
- 4) Անխել



Քարտեզ 2

31 **Բնութագրումով որոշել Աֆրիկայում տարածվող կլիմայական գոտին:**

Այս կլիմայական գոտին տարածվում է Գվինեական ծովածոցի ափերին և Կոնգոյի իջվածքում: Ամբողջ տարին տիրապետում են տաք և խոնավ օդային զանգվածները: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է +25°-ից +27°:

- 1) արևադարձային
- 2) հասարակածային
- 3) բարեխառն
- 4) արկտիկական

32 **Երկրի հասարակածային շառավիղի երկարությունը կազմում է մոտ.**

- 1) 6357 կմ
- 2) 6371 կմ
- 3) 6378 կմ
- 4) 6375 կմ

33 **Ինչպե՞ս է կոչվում տարբեր քարտեզներից կազմված գիրքը:**

- 1) գլոբուս
- 2) ուրվագծային քարտեզ
- 3) ատլաս
- 4) տեղագրական քարտեզ

34 **Տրված պետություններից ո՞րը չի եղել ԽՍՀՄ կազմում:**

- 1) Ադրբեջան
- 2) Թուրքիա
- 3) Վրաստան
- 4) Հայաստան

35 **Ո՞ր երկրներին է բնորոշ «ժողովրդագրական պայթյունը»:**

- 1) Ճապոնիային և Գերմանիային
- 2) Կանադային և Մեծ Բրիտանիային
- 3) Պակիստանին և Նիգերային
- 4) Ֆրանսիային և Իտալիային

36 **Տրված կրոններից ո՞րը համաշխարհային չէ:**

- 1) քրիստոնեություն
- 2) հուդայականություն
- 3) մահմեդականություն
- 4) բուդայականություն

37

Յուրաքանչյուր երկրում մարդկային գործունեության բնագավառների պատմականորեն ձևավորված համակարգը կոչվում է.

- 1) ազգային տնտեսություն
- 2) աշխատանքի բաժանում
- 3) համաշխարհային տնտեսություն
- 4) տնտեսական միասնացում

38

Տրված գյուղատնտեսական մշակաբույսերից ո՞րը չի համարվում առույգացնող:

- 1) սուրճ
- 2) թեյ
- 3) կակաո
- 4) սոյա

39

Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Աֆրիկայի ափերը խիստ մասնատված են:
- 2) Աֆրիկայի ափերի մոտ գտնվող խոշոր կղզի է Մադագասկարը:
- 3) Աֆրիկայի արևելյան ափերը ողողում են Ատլանտյան օվկիանոսի ջրերը:
- 4) Աֆրիկայի հարավային ափերի մոտ են գտնվում Կանարյան կղզիները:

40

Ո՞ր պնդումը բնորոշ չէ Ճապոնիային:

- 1) Ճապոնիան թերակղզային պետություն է:
- 2) Ճապոնիային բնորոշ է բնակչության ցածր բնական աճը:
- 3) Ճապոնիան գտնվում է տնտեսության զարգացման հետարդյունաբերական փուլում:
- 4) Ներքին բեռնափոխադրումներում մեծ է երկաթուղային տրանսպորտի դերը:

41

«Լեռնաշղթա — լեռնագագաթ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Ուրծի – Թեժ լեռ
- 2) Միափորի – Քաշաթաղ
- 3) Վայքի – Գոզի
- 4) Գուգարաց – Մուրղուզ

42

Ո՞ր մարզի տարածքում է գտնվում Շիկահողի արգելոցը:

- 1) Արարատի
- 2) Սյունիքի
- 3) Վայոց Ձորի
- 4) Տավուշի

- 43) Ո՞ր ռեսուրսի ճիշտ օգտագործման դեպքում ոչ միայն այն չի սպառվում, այլ անընդհատ բարելավվում, բարձրացնում է իր որակը:
- 1) երկաթաքար
 - 2) հող
 - 3) այրվող թերթաքար
 - 4) նավթ
- 44) Բնության հատուկ պահպավող տարածքներից ամենախիստ կարգավիճակն ունի.
- 1) արգելոցը
 - 2) արգելավայրը
 - 3) ազգային պարկը
 - 4) բնության հուշարձանը
- 45) Երևան քաղաքի օդային ավազանն առավելապես աղտոտող աղբյուր է հանդիսանում.
- 1) մեքենաշինությունը
 - 2) քիմիական արդյունաբերությունը
 - 3) նավթաքիմիան
 - 4) ավտոմոբիլային տրանսպորտը
- 46) Հատակագծի կամ քարտեզի վրա կոտորակի ձևով գրված մասշտաբը, որի համարիչը միշտ 1 է, կոչվում է.
- 1) գծային
 - 2) անվանական
 - 3) թվային
 - 4) պայմանական
- 47) Պարենային հիմնախնդրի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:
- 1) Պարենային հիմնախնդիրը չի ազդում հասարակական կյանքի այլ ոլորտների վրա:
 - 2) Մեկ մարդուն օրական միջին հաշվով անհրաժեշտ է ոչ պակաս, քան 2400-2600 կկալ պարունակող բազմապիսի սնունդ:
 - 3) Պարենային հիմնախնդիր գոյություն ունի միայն արդյունաբերական երկրներում:
 - 4) ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը զբաղվում է բնակչության բնական աճի կարգավորման խնդիրներով:
- 48) Հասարակածի վրա տեղակայված երկու քաղաքների հեռավորությունը 6000 կմ է, իսկ քարտեզում՝ 20 սմ: Որքա՞ն կլինի քարտեզի մասշտաբը:
- 1) 1:30 000 000
 - 2) 1:300 000
 - 3) 1:30 000
 - 4) 1:3000

49

Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Գրինվիչի միջօրեականը ամենաերկարն է:
- 2) Ամսաթվի փոփոխման գիծը արլ. ե. 150° միջօրեականն է:
- 3) Միջօրեականի 10° աղեղի երկարությունը հավասար 115 կմ-ի:
- 4) Բոլոր միջօրեականներն իրար հավասար են:

50

Որքա՞ն է տևում Երկրի մեկ պտույտն իր առանցքի շուրջ:

- 1) 1 ժամ
- 2) 6 ժամ
- 3) 24 ժամ
- 4) 48 ժամ

51

Տրվածներից ո՞ր ապարն ունի հրային ծագում:

- 1) տորֆ
- 2) գրանիտը
- 3) կրաքարը
- 4) քարածուխը

52

Երկրաբանական ո՞ր դարաշրջանում է ձևավորվել մարդը:

- 1) Արխեյան
- 2) Մեզոզոյան
- 3) Կայնոզոյան
- 4) Պրոտերոզոյան

53

Բնութագրումով որոշել ծովը:

Այս ծովը ողողում է միաժամանակ երեք աշխարհամասերի ափերը և համարվում է Ատլանտյան օվկիանոսի մաս: Ո՞ր ծովի մասին է խոսքը:

- 1) Կարիբյան
- 2) Միջերկրական
- 3) Բալթիկ
- 4) Բարենցի

54

Տրված մեգալոպոլիսներից ո՞րը ԱՄՆ-ում չէ:

- 1) Չիփիթս
- 2) Տոկայո
- 3) Սան-Սան
- 4) Բոսվաշ

55 Տրված երկրներից ո՞րն է ԵՄ անդամ:

- 1) Մեծ Բրիտանիա
- 2) Շվեյցարիա
- 3) Թուրքիա
- 4) Ֆրանսիա

56 Դուրս գրել այն քաղաքների համարները, որոնք Գեղարքունիքի մարզում են:

- | | |
|-------------|-------------|
| 1) Գավառ | 5) Իջևան |
| 2) Դիլիջան | 6) Սևան |
| 3) Մարտունի | 7) Վարդենիս |
| 4) Հրազդան | 8) Աբովյան |

57 Դուրս գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Հնդկական օվկիանոս:

- | | |
|------------|-----------|
| 1) Գանգես | 5) Ամուր |
| 2) Հուանհե | 6) Լենա |
| 3) Վոլգա | 7) Դանուբ |
| 4) Ինդոս | 8) Ենիսեյ |

58 Դուրս գրել պետական վարչատարածքային կառավարման դաշնային ձև ունեցող երկրները:

- | | |
|--------------|-------------|
| 1) Իտալիա | 5) Ֆրանսիա |
| 2) Գերմանիա | 6) Հայաստան |
| 3) Կանադա | 7) Թուրքիա |
| 4) Հնդկաստան | 8) Բրազիլիա |

59 Դուրս գրել տեկտոնական ծագում ունեցող լճերի համարները:

- | | |
|------------|--------------|
| 1) Չադ | 5) Մեծ Արջի |
| 2) Նյասա | 6) Լադոգա |
| 3) Բայկալ | 7) Տանգանիկա |
| 4) Արալյան | 8) Աթաբասկա |

60 Դուրս գրել հացահատիկային մշակաբույսերի համարները:

- | | |
|--------------|-------------|
| 1) ցորեն | 5) վուշ |
| 2) գարի | 6) կակաո |
| 3) բրինձ | 7) ծիրանենի |
| 4) բամբակենի | 8) թեյ |

61 Դուրս գրել այն երկրների համարները, որոնք գտնվում են Արևելյան Ասիա տարածաշրջանում:

- | | |
|--------------|--------------|
| 1) Հնդկաստան | 5) Բանգլադեշ |
| 2) Չինաստան | 6) Ինդոնեզիա |
| 3) Ճապոնիա | 7) Ղազախստան |
| 4) Մոնղոլիա | 8) Իրան |

62 ՀՀ քաղաքները դասավորել ըստ հարավից հյուսիս հաջորդականության:

- 1) Ջերմուկ 2) Ալավերդի 3) Հրազդան

63 Գրել այն ջրային օբյեկտների հաջորդականությունը, որն անհրաժեշտ է անցնել Ատլանտյան օվկիանոսից Հնդկական ամենակարճ ուղիով գնալու դեպքում:

- 1) Սուեզի ջրանցք
- 2) Միջերկրական ծով
- 3) Կարմիր ծով
- 4) Ջիբրալթարի նեղուց

64 Երկրի բնակչության թիվը 50 մլն մարդ է, գյուղաբնակների բացարձակ թիվը 32 մլն մարդ է: Հաշվել ուրբանիզացման մակարդակը:

65 Երկրի տրանսպորտային ուղիների երկարությունը 80 000 կմ է, երկրի տարածքը՝ 20 000 կմ² է: Հաշվել տրանսպորտային ցանցի միջին խտությունը:

66

Բնակավայրի աշխարհագրական կոորդինատներն են հս.լ. $35,5^\circ$ և արլ.ե. 100° :
Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը հունիսի 22-ի կեսօրին:

67

Լեռան ստորոտում օդի ջերմաստիճանը 10° է, իսկ լեռան գագաթին՝ -14° է:
Հաշվել լեռան հարաբերական բարձրությունը (հաշվարկը կատարել 6° -ով):

68

Երկու բնակավայրեր գտնվում են հասարակածի վրա, մեկը արլ.ե. 50° , իսկ
մյուսը՝ արմ.ե. 25° վրա: Որոշել երկու քաղաքների միջև եղած ամենակարճ
հեռավորությունը կիլոմետրերով:

69

Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք սխալ:

- 1) Տվյալ պահին միջօրեականի վրա դիտված ժամանակը կոչվում է տեղական ժամանակ:
- 2) Երկիրն իր առանցքի շուրջը մեկ լրիվ պտույտ է կատարում 365 օրում:
- 3) Երկրի գնդաձևության և օրական պտույտի հետևանքով առաջանում է գիշերվա և ցերեկվա հերթափոխություն:
- 4) Ամսաթվի փոփոխման միջազգային գիծը անցնում է 0° միջօրեականով:
- 5) Երկիրը Արեգակից գտնվում է 150 մլն կմ հեռավորության վրա:
- 6) Երկրի գնդաձևությունը ոչ մի հետևանք չի թողնում ջերմային գոտիների առաջացման վրա:

70

Սյունիքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք սխալ:

- 1) Մարզը հյուսիսից սահմանակցում է Իրանի Իսլամական Հանրապետության հետ:
- 2) Մարզի նշանավոր գետերից են Որոտանը, Ողջին և Մեղրիգետը:
- 3) Մարզի տարածքում է գտնվում Խոսրովի արգելոցը:
- 4) Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ՀՀ խոշորագույն ձեռնարկություններից է:
- 5) Մարզի զբոսաշրջության զարգացմանը նպաստում է աշխարհի ամենաերկար «Տաթևեր» ճոպանուղին:
- 6) Գորիսը քաղաք է եղել դեռևս ցարական իշխանության օրոք: